

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՓՈԽՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1991-1998 ԹԹ.**

**ԱՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ**

Հայ-սիրիական առնչությունները ունեն ավելի քան երկուհազարամյա պատմություն, որտեղ առանձնակի դեր ու նշանակություն են ձեռք բերել գիտամշակութային հարաբերությունները: Հայաստանի ու Սիրիայի մշակութային առնչությունները սկսվել են այն ժամանակներից, երբ հայերը դեռևս քրիստոնյա չէին, իսկ արաբները՝ մուսուլման, հետո շարունակվեցին քրիստոնեական Հայաստանի և մուսուլմանական Սիրիայի օրոք՝ հասնելով մինչև մեր օրերը: Հայաստանի և Սիրիայի ժողովուրդների միջև առկա ջերմ հարաբերությունների հիմքը պատմամշակութային ընդհանրություններն ու դարավոր բարեկամությունն են: Հայ-սիրիական կապերը զարգացման առավել նպաստավոր պայմաններում հայտնվեցին Տիգրան Երկրորդի օրոք<sup>1</sup>, երբ հայոց արքան իր տերությանը միացրեց Միջագետքի ու Սիրիայի մեծ մասը՝ տիրելով նաև հելլենիստական աշխարհի միջազգային այնպիսի մի կարևոր ճանապարհի, ինչպիսին Պարսից ծոց-Ջևզմա-Անտիոք ճանապարհն էր: Ընդհանրապես գոյություն ունեւր Հայաստանին հարակից մշակութային տարածք հասկացությունը, որը շատ կարևոր էր տեղական ժողովուրդների համար: Սիրիան, ինչպես նաև արաբական մի շարք երկրներ մտել են Հայաստանի պատմամշակութային տարածքի մեջ: Հայաստանը երկուսուկես դար եղել է արաբական տիրապետության տակ, շուրջ չորս դար արաբների հետ միասին Օսմանյան կայսրության կազմում: Հենց այս երկար ու տևական ժամանակահատվածում էլ ձևավորվել ու ամրապնդվել է հայ ու արաբ ժողովուրդների պատմամշակութային կապը: Պատկանելով տարբեր դավանանքների՝ մեր ժողովուրդները իրենց հավատի մեջ առաջին հերթին առաջնորդվել են հոգևոր համամարդկային արժեքներով ու փոխադարձ հարգանքով:

Սիրիան հատուկ մշակութային հարաբերություններ ունեւր Խորհրդային Հայաստանի հետ՝ փոխադարձ այցելություններ, հյուրախաղեր, նույնիսկ Սիրիայի մշակույթի նախարարության ջանքերով շատ հայ հեղինակների ստեղծագործություններ թարգմանվում էին արաբերենի: Շփումները հատկապես ակտիվացան ԽՍՀՄ փլուզումից առաջ: 1991թ. օգոստոսին սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի հրավերով Երևանում հյուր էին Համազգային մշակութային և կրթական միության Սի-

---

<sup>1</sup> Տե՛ս «Հայ գաղթաշխարհի պատմություն», «Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութները», խմբ. Վ. Միքայելյանի, հ. 2, Եր., 2003, էջ 318, «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Եր., 1971, էջ 563-564, **Ռ. Մանասերյան**, Տիգրան Մեծի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Եր., 1987, էջ 55-57:

րիայի շրջանային վարչության անդամները, որոնք Երևան-Չալեպ մշակութային կապերի ամրապնդման նպատակով հանդիպեցին իրենց հրավիրած կազմակերպության, Հայաստանի մշակույթի և արտաքին գործերի նախարարությունների ղեկավարների հետ<sup>2</sup>: Այցելության ընթացքում նրանք եղան նաև Սուրբ Էջմիածնում, որտեղ նրանց ընդունել էր Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը: Դրան նախորդած երկու տարիների ընթացքում վարչությունը մեծ աշխատանք էր տարել մշակութային կապերի ծավալման ուղղությամբ: Այդ շրջանում նրա հրավերով մայր հայրենիքից տարբեր խմբերով Չալեպ էր մեկնել շուրջ 250 մարդ՝ գրողներ, արվեստաբաններ, դերասաններ, լրագրողներ: Բացի Չալեպից, նրանք այցելել էին նաև Դամասկոսում, Կամիշլիում, Քեսաբում ու Լաթաքիայում ապրող մեր հայրենակիցներին: Չմոռանանք, որ Սիրիան հայ ազգային կյանքի տարածաշրջանային կենտրոն էր: Ազգային ու մշակութային տասնյակ միությունները, կրթական ու բարեսիրական հաստատությունները ծաղկում են ապրել սիրիական պարարտ հողում՝ հյուրընկալ ժողովրդի ջերմությամբ ու պետության հոգածությամբ շրջապատված: Սիրիայում բավականին կայացած մշակութային միություններից են Նոր սերունդը, Թեքեյանը, Համազգայինը և այլն: Հայաստանի Հանրապետության անկախացման սկզբնական շրջանում այս մշակութային կազմակերպությունները ու նրանց հայաստանյան կառույցները մայր հայրենիքի հետ շփումներում մեծ դերակատարում ունեին<sup>3</sup>:

1991 թ. սեպտեմբերի 21-ին անկախության պաշտոնական հռչակումով Հայաստանը իրական հնարավորություն ստացավ կրկին հայտնվելու մերձավորարևելյան տարածաշրջանում որպես անկախ և ինքնուրույն գործոն<sup>4</sup>: Նրա առջև բացվեցին դռներ՝ մերձավորարևելյան քաղաքական, ռազմաստրատեգիական, տնտեսական և մշակութային համակարգի մաս կազմելու հեռանկարով: Սիրիան առաջիններից էր, որ ճանաչեց Հայաստանի անկախությունը, իսկ 1992 թվականի մարտի սկզբին Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ<sup>5</sup>: Նույն ամսվա վերջին՝ մարտի 30-ին, ՍԱՀ արտաքին գործերի նախարար Ֆարուկ Ալ Շարալի Հայաստան կատարած այցելության ժամանակ Երևանում ստորագրվեցին երեք համաձայնագրեր, որոնց թվում էր նաև մշակութային համագործակցության մասին փաստաթուղթը<sup>6</sup>: Հայաստանը միջինարևելյան արտաքին քաղաքականության մեջ կարևորելով արաբական երկրների հետ հարաբերությունների զարգացման անհրաժեշտությունը՝ առանձնահատուկ վերաբերմունք էր ցուցաբերում Սիրիայի հետ հաստատված բարեկամական հարաբերությունների ընդլայնմանը: Այդ իսկ պատճառով, ստորագրելով սույն համաձայնագիրը, կողմերը ձգտում էին էլ ավելի խորաց-

<sup>2</sup> Տե՛ս «Ավանգարդ» օրաթերթ, 22. 08. 1991 թ.:

<sup>3</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 18. 06. 2009 թ.:

<sup>4</sup> Տե՛ս **Ն. Հովհաննիսյան**, Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ, հ. 16, Եր., 1996, էջ 10:

<sup>5</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 10. 03. 1992 թ.:

<sup>6</sup> Տե՛ս «Երեկոյան Երևան» օրաթերթ, 31.03. 1992 թ.:

ճել դարերով ձևավորված հայ ու արաբ ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը գիտության ու մշակույթի ասպարեզում: Կարծում ենք նաև, որ այս համաձայնագիրը դարձավ լավ հիմք ապագայում երկու երկրների միջև սույն ոլորտում հարաբերությունների կարգավորման և զարգացման համար: Համաձայնագիրը բաղկացած էր տասնվեց հոդվածից, ստորագրված էր հայերեն ու արաբերեն՝ երկուական օրինակով: Կողմերը այս համաձայնագրի իրականացման համար պետք է մշակեին համապատասխան ծրագրեր, որոնք հերթականությամբ ստորագրվելու էին երկու մայրաքաղաքներում: Ըստ պայմանագրի՝ կողմերը, գործող օրենսդրության և Միավորված ազգերի կազմակերպության ոգուն համապատասխան, համահավասարության սկզբունքի հիման վրա պետք է նպաստեին երկու երկրների միջև մշակույթի, կրթության ու գիտության բնագավառներում համագործակցությանը: Կողմերը պետք է համագործակցեին նաև վերոնշյալ ոլորտներում գործող միջազգային կազմակերպությունների հետ: Համաձայնագրով խրախուսվում էին համալսարանների, այլ ուսումնական և գիտահետազոտական հաստատությունների միջև համագործակցությունը, գիտության ու մշակույթի ոլորտին նվիրված ցուցահանդեսների, կինոփառատոների կազմակերպումը, թատերական և երաժշտական խմբերի հյուրախաղերը, երկու երկրներում լույս տեսնող գիտական, գեղարվեստական ու մշակույթի վերաբերյալ լավագույն ստեղծագործությունների թարգմանությունն ու հրատարակումը, ձեռագրերի ու պատմական վավերագրերի փոխանակումը և այլն: Ընդհանուր առմամբ, համաձայնագիրն ընդգրկում էր գիտակրթական և մշակութային հարցերի բավականին լայն շրջանակ: Այն երկու երկրների միջև կնքված առաջին մասն կարգի պետական համաձայնագիրն էր, որը հետագայում մեծ ու դրական ազդեցություն ունեցավ այս բնագավառում նրանց միջև հարաբերությունների զարգացման գործում:

1992 թվականի ապրիլի վերջին Հալեպի Արամ Մանուկյան մշակույթի տան Լևոն Շանթ դահլիճում տեղի ունեցավ «Այբ և Բեն» ցուցահանդես-վաճառքը, որին ներկայացված էին հայկական ու արտասահմանյան մանկական գրականության նմուշներ<sup>7</sup>: Դրան նախորդել էր Հալեպում լույս տեսնող պարբերականների ցուցադրումը նույն դահլիճում: Այցելուները կարող էին ծանոթանալ այնտեղ տպագրվող շաբաթաթերթերի, թերթերի ու գրքերի հետ: Սիրիայում բավականին հայտնի էր Համազգային միության «Զվարթնոց երգչախումբը», որը իր գոյության տասնամյակների ընթացքում հասցրել էր մեծ համբավ ձեռք բերել: Երգչախմբի ցանկացած ելույթ մեծ իրադարձություն էր հայ համայնքի մշակութային կյանքում: Բացառություն չկազմեց նաև 1992 թվականի մարտի համերգաշարը, որի ընթացքում հնչեցին հայկական գուսանական, ազգային-հայրենասիրական, դասական և արաբական երգեր: Սիրիայում հայ-արաբական մշակութային միջոցառումների անցկացման առումով աչքի էր ընկնում Հալեպ քաղաքը, ինչը, կարծում ենք, օրինաչափ էր, քանի որ այնտեղ էր գտնվում Սիրիայում ապրող հայերի գերակշիռ մասը, և միջոցառումների թե՛ կազմակերպման, թե՛ անցկացման առումով նրանց դերակատարումը միշտ եղել է մշա-

<sup>7</sup> Տե՛ս «Республика Армения», 01. 05. 1992 г.

նակալի: Ընդհանրապես, Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվելուց հետո մշակութային ոլորտը հայ-սիրիական հարաբերություններում դարձավ ամենակայացածներից մեկը: Դա սիրիահայ համայնքի շնորհիվ էր, որը լուրջ մշակութային գործոն էր, և որին վիճակված էր կամրջի դեր կատարել Հայաստանի և Սիրիայի միջև:

1992 թվականի մայիսի 12-ին Հալեպի պետական համալսարանի կենտրոնական գրադարանի ցուցասրահում բացվեց հայ-սիրիական հարաբերությունների պատմությանը նվիրված ցուցահանդես<sup>8</sup>: Ցուցադրվող նյութերը վերաբերում էին մինչքրիստոնեական ժամանակներին և հասնում մինչև մեր օրերը: Դրանք պատմում էին հայ և արաբ ժողովուրդների մշակութային ու տնտեսական կապերի մասին՝ վկայակոչելով արաբների բարեհաճ վերաբերմունքը հայ ժողովրդի հանդեպ: Սիրիայում հայերը հավատարիմ, գործունյա, սիրիական հասարակությունում առավելապես ինտեգրված ազգային փոքրամասնության համարում ունեն, և այս ցուցահանդեսն էլ կարծես դրա վկայությունն էր:

Իրագործելով ՀՀ-ի և ՍԱՀ-ի միջև 1992 թվականի մարտի 30-ին երևանում ստորագրված մշակութային համաձայնագիրը և ցանկանալով ամրապնդել ու զարգացնել երկու բարեկամ երկրների բարձրագույն կրթության նախարարությունների մշակութային, կրթական ու գիտական հարաբերությունները՝ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության նախարար Վարդգես Գնունու հրավերով ՍԱՀ բարձրագույն կրթության նախարար դոկտոր տիկին Սալիհա Սունկորի գլխավորած պատվիրակությունը 1994 թվականի հունիսի 30-ից հուլիսի 4-ը այցելեց Հայաստան<sup>9</sup>: Այդ ժամանակ երկու երկրների բարձրագույն կրթության նախարարությունների միջև ձեռք բերվեց համագործակցության վերաբերյալ համաձայնություն: Այն ներառում էր հետևյալ ասպարեզները՝ երկու երկրների ուսումնական հաստատությունների միջև բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների պայմանագրերի կնքման խրախուսում, դասախոսների և գիտնականների փոխանակում, համատեղ գիտական հետազոտությունների անցկացում ու փոխանակում, համալսարանական, դպրոցական, ինչպես նաև գիտական հրատարակությունների փոխանակում, երկու երկրների համալսարանների ու բարձրագույն ուսումնական հաստատությունների կարգ շնորհած գիտական աստիճանների ու դիպլոմների փոխադարձ ճանաչում, կրթաթոշակների և ուսումնատեղերի փոխանակում և այլն: Այս ամենի վերաբերյալ երկու երկրների բարձրագույն կրթության նախարարները 1994 թվականի հուլիսի 4-ին ստորագրեցին արձանագրություն հայերեն ու արաբերեն բնօրինակներով<sup>10</sup>:

Կարծում ենք՝ Սիրիայի Արաբական Հանրապետության բարձրագույն կրթության նախարարի այցելությունը Հայաստան շատ կարևոր էր 1992 թվականին ստորագրված մշակութային պայմանագրի իրականացման առումով: Այն, փաստորեն, առաջին գործնական քայլն էր մշակութային

<sup>8</sup> Տե՛ս “Республика Армения”, 22. 05. 1992 г.

<sup>9</sup> Տե՛ս ՀԱԱ, ց. 9, գ. 147:

<sup>10</sup> Տե՛ս ՀԱԱ, ց. 9, գ. 147:

պայմանագրի իրագործման հարցում, քանի որ այցելության ընթացքում ստորագրված արձանագրությունը դարձավ հիմք առաջին գործնական ծրագրի համար:

1995 թվականի հունվարի 17-ին պաշտոնական այցով ՍԱՀ մեկնեց ՀՀ կառավարության պատվիրակությունը ՀՀ բարձրագույն կրթության և գիտության նախարար Վարդգես Գնունու ղեկավարությամբ<sup>11</sup>: Այն հանդիպումներ ունեցավ ՍԱՀ բարձրագույն կրթության նախարար տիկին Սալիհա Սունկորի, մշակույթի նախարար տիկին Նաջահ Ալ Ատտարի, լուսավորության նախարար Մուհամեդ Ղասան Ալ Հալաբի հետ, որը նաև սիրիական կառավարության մշակույթի, կրթության ու լուսավորության հարցերով զբաղվող համձնախմբի նախագահն էր: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին գիտության, կրթության, լուսավորության ու մշակույթի ասպարեզներում երկու երկրների միջև համագործակցության խնդիրներն ու հեռանկարները: ՀՀ բարձրագույն կրթության նախարարին ընդունել է նաև ՍԱՀ վարչապետը, ով գոհունակություն է հայտնել հայ-սիրիական հարաբերությունների մակարդակից և հույս հայտնել, որ դրանք ապագայում ավելի կխորանան ու բազմաբնույթ կդառնան: Միևնույն ժամանակ աշխատանքային խմբերը բանակցում էին 1992 թվականի մարտի 30-ին ստորագրված մշակութային, գիտական և կրթական համագործակցության մասին համաձայնագրի գործնական ծրագրի շուրջ: Արդյունքը եղավ այն, որ 1995 թվականի հունվարի 19-ին ստորագրվեց մշակութային, գիտության ու կրթության համագործակցության մասին գործնական ծրագիր ՀՀ և ՍԱՀ միջև 1995-1997 թվականների համար<sup>12</sup>: ՀՀ կառավարության կողմից այն ստորագրեց պատվիրակության ղեկավարը, իսկ ՍԱՀ կողմից՝ լուսավորության նախարարը<sup>13</sup>: Գործնական ծրագիրը պարունակում էր 55 հոդված և նախատեսում էր երկու երկրների միջև ամենալայն ու բազմաբնույթ համագործակցություն: Ծրագիրը նախատեսված էր երեք տարվա համար և լայն հնարավորություն էր տալիս խորացնելու համագործակցությունը նշված ոլորտներում: Համաձայնագրով նախատեսվում էր, որ հայկական կողմը պետք է ավելի շատ ուսանող և ասպիրանտ ընդունի, սակայն դրա փոխարեն մյուս ոլորտներում (ցուցահանդեսներ, փառատոներ և այլն) ստանա փոխհատուցում:

1995 թվականից ի վեր յուրաքանչյուր տարի արաբերենի կատարելագործման նպատակով Հայաստանից Սիրիա էր մեկնում մոտ 30-35 ուսանող, իսկ Հայաստանում ուսանում էին մոտ 700 արաբ ուսանողներ<sup>14</sup>: Սիրիա մեկնած հայ ուսանողները ներկայացնում էին Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետը: Նրանք ուսանում ու վերապատրաստվում էին Հալեպի և Դամասկոսի համալսարաններում, իսկ սիրիացի ուսանողներն ու ասպիրանտները՝ Հայաստանի տարբեր բուհերում: Հարկ է նշել նաև, որ մինչ գործնական ծրագրի ընդունումը հայկական գեղարվեստական ու մարզական պատվիրակությունները արդեն

<sup>11</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ք. 248, էջ 1:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 2:

<sup>13</sup> Տե՛ս «Ազատ օր» օրաթերթ, Աթենք, 11. 02. 1995 թ.:

<sup>14</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ք. 249, էջ 14:

մասնակցել էին Սիրիայում տեղի ունեցած մշակութային միջոցառումների և սպորտային մրցումների, որոնց ֆինանսավորումը կատարել էր սիրիական կողմը: ՀՀ կառավարական պատվիրակության այցելությունը ՍԱՀ ու գործնական ծրագրի ստորագրումը ՍԱՀ բարձրագույն կրթության նախարարի Հայաստան կատարած այցի ու Հայաստանում ձեռք բերված պայմանավորվածությունների բնականոն շարունակությունն էին, որի հիմքը 1992 թվականի մարտի 30-ի մշակութային համաձայնագիրն էր Հայաստանի Հանրապետության ու Սիրիայի Արաբական Հանրապետության միջև: Այն իրականացվում էր բավական հետևողականորեն ու փոխադարձ վստահության մթնոլորտում: Հայկական պատվիրակությունը եղավ նաև Հալեպ, Կունեյտրա և Հոմս քաղաքներում, հանդիպեց Հալեպի և Կունեյտրայի նահանգապետերի, Հոմսի և Հալեպի համալսարանների ռեկտորների հետ: Պատվիրակությունը այցելեց նաև Հալեպի արաբական գիտական ժառանգության ինստիտուտ: Նշված կրթօջախներում քննարկվող հիմնական հարցերը վերաբերում էին երկկողմ համագործակցությանն ու կապերի հաստատմանը: Շատ օգտակար կարելի է համարել պատվիրակության այցելությունը Դամասկոսի համալսարան ու հանդիպումը այդ համալսարանի ռեկտորի հետ, որի ընթացքում հստակեցվել էին մի քանի ուղղություններ, որտեղ համատեղ աշխատանքը կարող էր օգտակար լինել երկու կողմերի համար: Մասնավորապես նշվել էին ֆիզիկայի, մեխանիկայի, դեղագիտության, հնագիտության, պատմության և մի քանի այլ ոլորտներ: Հայկական պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ նաև Սիրիայի հայ համայնքի հետ, որի դերը շատ մեծ էր հայ-սիրիական հարաբերությունների զարգացման գործում թե՛ նշված ոլորտներում, թե՛ ընդհանրապես: 1995 թվականի հունվարի 17-25-ը ՀՀ կառավարական պատվիրակության այցելությունը ՍԱՀ և ձեռք բերված արդյունքները երկուստեք շատ արդյունավետ ու օգտակար էին: Հաշվի առնելով այն մեծ հետաքրքրությունը, որ ունենք արաբական աշխարհի նկատմամբ, հայկական կողմի համար մեծ նշանակություն ունեին մեր ուսանողների ուսուցանումը և կատարելագործումը Սիրիայում: Բոլորին է հայտնի արաբերենի բարդությունը, իսկ առանց գործնական կիրառության այն, կարելի է ասել, անհնար է յուրացնել: Այդ իսկ պատճառով մեր ուսանողների ուսուցումը Սիրիայում և արաբերենի կատարելագործումը շատ լուրջ խթան պետք է ծառայեր Հայաստանի Հանրապետությունում արաբագիտության զարգացման գործում և նպաստեր արաբական աշխարհի և մշակույթի առավել լավ ճանաչմանը: Գործնական ծրագրի ստորագրումը մեզ համար նաև կարևորվում էր նրանով, որ բազմաթիվ և բազմապիսի մշակութային միջոցառումները կարող էին լավ առիթ դառնալ տեղի հայ համայնքի համար մայր հայրենիքի հետ կապի ամրապնդման առումով: Դրանք կարող էին նաև միավորիչ դերակատարում ունենալ համայնքի կյանքում, որի ազդակ կարող էին լինել հայրենիքը, Հայաստանի դրոշը, հայության գաղափարը և այլն: Ինչպես գիտենք, Սիրիան յուրահատուկ կրոնադավանաբանական ու էթնիկ բարդ խճանկար ունեցող երկիր է<sup>15</sup>: Կա հայության որոշակի հատված, որ ընդհանրապես հայախոս չէ: Գոյություն ունեն առաքելական,

<sup>15</sup> Տե՛ս <http://noravank.am/arm/issues/detail.php>

կաթողիկե և ավետարանական համայնքներ՝ իրենց առանձնահատկություններով: Այդ իսկ պատճառով մենք կարծում ենք, որ կազմակերպվող մշակութային միջոցառումները կարող էին դրական մեծ ազդեցություն ունենալ, քանի որ դրանց հրավիրվում էին բոլորը: Այդ գործում շատ մեծ էր Հայաստանի դեսպանատան դերը, որը իր գործունեության հենց սկզբից լուրջ դերակատարում է ունեցել այդ ուղղությամբ կատարված աշխատանքներում: Սիրիական կողմի համար ևս շատ կարևոր էր գործնական ծրագրի ստորագրումը, քանի որ ամեն տարի սիրիացի հարյուրավոր ուսանողներ հնարավորություն էին ստանում ուսանելու, իսկ մի մասը՝ նաև գիտական գործունեություն ծավալելու Հայաստանում: Սիրիացիները Հայաստանում հիմնականում ուսումնասիրում էին բժշկագիտություն և ճարտարագիտություն:

1995 թվականի հունիսի 6-13-ը ՍԱՀ-ում կայացավ ջազ երաժըշտության արաբա-եվրոպական առաջին միջազգային փառատոնը<sup>16</sup>, որին մասնակցեցին նաև Հայաստանի երաժիշտները: Փառատոնը կազմակերպվել էր ՍԱՀ մշակույթի նախարարության, Դամասկոսում Ֆրանսիայի, Գերմանիայի, Բրիտանիայի ու Իսպանիայի մշակութային կենտրոնների ու Հայաստանի դեսպանության ջանքերով: Հայ, եվրոպացի և արաբ երաժիշտները հանդես էին եկել համերգներով Դամասկոս ու Հալեպ քաղաքներում: Այս փառատոնը լավ առիթ էր մշակութային շփման առումով՝ հայերի, արաբների, ինչպես նաև եվրոպացիների համար: Ինչպես տեսնում ենք, հայ-սիրիական բարեկամությունը և մշակութային սերտ կապերը թողնում էին իրենց դրական ազդեցությունը՝ նպաստելով առաջադեմ երկրների հետ մշակութային շփումներին:

1996 թվականի մարտի 25-ից ապրիլի 1-ը Սիրիա այցելեց Հայաստանի Հանրապետության մշակույթի ու երիտասարդության ու սպորտի նախարարության պատվիրակությունը և հանդիպումներ ունեցավ ՍԱՀ մշակույթի նախարարի, փոխնախարարի և երիտասարդության ու սպորտի պատասխանատուների հետ: Տեղի ունեցան պաշտոնական բանակցություններ երկու երկրների միջև ստորագրված գործնական ծրագրի «մշակույթ և արվեստ» բաժնի հիման վրա՝ հստակեցնելով միջոցառումների անցկացման մանրամասներն ու ժամկետները: Բանակցություններն ավարտվեցին նրանով, որ ՍԱՀ մշակույթի նախարարության հետ ստորագրվեց 1996-1997 թվականների համագործակցության հուշագիր<sup>17</sup>, իսկ սպորտի միության հետ՝ համագործակցության համաձայնագիր ու ժամանակացույց: Պայմանավորվածություններ ձեռք բերվեցին նաև Հայաստանում Սիրիայի և Սիրիայում Հայաստանի մշակութային օրեր կազմակերպելու մասին, իսկ այդ տարվա աշնանը Սիրիայում անցկացնել հայկական ֆիլմերի փառատոն: Հայաստանի մշակույթի նախարարության պատվիրակության այցի նպատակն էր կոնկրետ ոլորտներում ավելի խորացնել համագործակցությունը՝ հենվելով նախօրոք ստորագրված փաստաթղթերի վրա: Պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ նաև սիրիահայ մշակութային միությունների հետ, որ-

<sup>16</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ք. 248, էջ 67:

<sup>17</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ք. 249, էջ 43:

տեղ քննարկվեցին Հայաստան-Սփյուռք մշակութային համագործակցության հարցեր:

1996 թվականի նոյեմբերի 26-ին Դամասկոսի Շամ հյուրանոցի դահլիճում, հանդիսավոր պայմաններում ՍԱՀ մշակույթի նախարարի և ՍԱՀ ՀՀ դեսպանատան հովանավորությամբ սկսվեց հայկական ֆիլմերի շաբաթը, որն այնուհետև շարունակվեց Սիրիայի մյուս հայաշատ քաղաքներում: Միաժամանակ ՀՀ մշակույթի նախարարության պատվիրակությունը բանակցություններ էր վարում ՍԱՀ մշակույթի նախարարության ու կինեմատոգրաֆիայի ազգային հաստատության ղեկավարության հետ այս ուղղություններում երկու երկրների միջև համագործակցությունը խորացնելու նպատակով: Մշակութային նման հրաշալի միջոցառումը Սիրիայում նշանակալի իրադարձություն էր ու բխում էր երկու երկրների ու ժողովուրդների դարավոր բարեկամությունից և միմյանց մշակութային արժեքներին ավելի լավ ծանոթանալու ցանկությունից:

1997 թվականին ՍԱՀ այցելեց ՀՀ կառավարական պատվիրակությունը, որը հանդիպեց Սիրիայի վարչապետի, մշակույթի նախարարի և այլ պաշտոնյաների հետ<sup>18</sup>: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին 1998 թվականի առաջին կիսամյակում Հայաստանում Սիրիայի մշակույթի օրեր անցկացնելու, երկու երկրների միջև մշակութային կապերն ընդլայնելու և համատեղ միջոցառումներ կազմակերպելու խնդիրներ: Սիրիացի պաշտոնակցի հետ Հայաստանի գրողների միության նախագահի հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց հրատարակելու երկու երկրների ժամանակակից գրողների ստեղծագործությունների թարգմանությունները: Հայաստանյան պատվիրակությունը հանդիպեց նաև տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Շարունակելով գործնական շփումները և ակտիվ համագործակցությունը՝ ՍԱՀ և ՀՀ կառավարությունների միջև 1998 թվականին ստորագրվեց կրթական, գիտական ու մշակութային համագործակցության մասին երկրորդ գործնական ծրագիրը՝ 1999-2001 թվականների համար<sup>19</sup>: Այն հիմնվում էր 1992 թվականի մարտի 30-ին երկու երկրների միջև ստորագրված մշակութային համագործակցության մասին համաձայնագրի վրա, և լինելու էր 1995-1997 թվականների ծրագրի շարունակությունը, և կոչված էր նպաստելու կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում գոյություն ունեցող համագործակցության ամրապնդմանը՝ էլ ավելի զարգացնելով ու խորացնելով այն:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության հարաբերությունները գիտության, կրթության և մշակույթի ասպարեզներում 1990-ական թվականներին բավականին լավ զարգանում էին՝ հագեցած բազմաթիվ ու բազմաբնույթ իրադարձություններով: Այդ կարճ ժամանակահատվածում երկու երկրներին հաջողվեց ստեղծել կայուն իրավապայմանագրային դաշտ, որին նպաստեցին երկուստեք հաճախակի շփումները, պետական-պաշտոնական փոխադարձ այցելությունները և ստորագրված միջպետական

<sup>18</sup> Տե՛ս «Республика Армения», 29. 11. 1997 г.

<sup>19</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ք. 143, էջ 65:



փաստաթղթերը: Ձեռք բերված պայմանավորվածությունները, շատ արագ վերածվելով գործնական ծրագրերի, իրականանում էին՝ դառնալով լավ նախադեպ ապագայի համար:

**ԱՐԱ ՕԳԱՆԵՏՅԱՆ – *Научные и культурные взаимоотношения между Республикой Армения и Сирийской Арабской Республикой в 1991–1998 гг.*** – Сирия одной из первых признала независимость Армении. Некоторое время спустя между двумя странами установились дипломатические отношения, а 30 марта 1992 г. в Ереване было заключено соглашение об армяно-сирийском культурном сотрудничестве. На его основе состоялось множество официальных и государственных визитов и культурных мероприятий. Достигнутые 20 лет назад договорённости успешно осуществляются, и двусторонние отношения в сфере науки и культуры можно считать одними из наиболее состоявшихся.

**ԱՐԱ ՈՎԿԱՆՆԻՏՅԱՆ – *The Scientific-Cultural Mutual Relations between the Republic of Armenia and the Arab Republic of Syria in the Period of 1991-1998.*** – The article discusses the process of establishment of relationships in the fields of science and culture between the newly independent Armenia and Syria. After the establishment of independence in Armenia Syria was one of the first countries to recognize the independence of Armenia. Shortly after this diplomatic relationships between the two countries were established. On March 30, 1992, a document on establishment of cultural interrelations between the Republic of Armenia and Arab Republic of Syria was signed in Yerevan, which became the basis for the development of cooperation between the two countries in the mentioned field. The first functional programs were signed. Since then a lot of official visits have been held. In general the relationships set up between the two countries in the mentioned field and the mentioned period can be considered to be the most successful ones.